

20
21

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	3
2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	7
ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	8
ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ	10
ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ	13
ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ	15
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ	16
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ	19
ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	19
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ	20
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	20
ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ	23
ՑՈՒՆԻԲԱՆԿԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	23
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	25
ՄԵՐ ԹԻՄԸ	26
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ	30
ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	31



ԴԱՎԻԹ ԲԵԿ

Դավիթ Բեկը (ծննդյան թիվն անհայտ է, մահացել է 1728 թ. վերջին) հայ ազգային-ազատագրական շարժման առաջնորդ է, զորավար:
 Դիմերեն՝ Հալիծորի բերդապարիսպը Խուստուփ լեռան ֆոնին, ջահի և թրի պատկերներ:
 Դարձերեն՝ դրվագ Դավիթ Բեկի հուշարձանից Կապանում:

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանյան բանկային համակարգի համախառն ակտիվները 2021թ.-ին կազմել են 7,007 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 6.38%-ով կամ 420 մլրդ ՀՀ դրամով 2020թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ: Համակարգի վարկային ներդրումների ընդհանուր ծավալը 2021թ.-ի արդյունքներով կազմել է ավելի քան 3,991 մլրդ ՀՀ դրամ՝ նվազելով 1.5%-ով 2020թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ:

Բանկերի պարտավորությունները հաշվետու տարում աճել են 6.68%-ով կամ 381 մլրդ ՀՀ դրամով կազմելով 6,088 մլրդ ՀՀ դրամ: Համախառն ավանդների ծավալը 2021թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,899 մլրդ ՀՀ դրամ, ինչը 9.1%-ով կամ 325.9 մլրդ դրամով ավելի է 2020թ.-ի դեկտեմբերի ցուցանիշից:


ՀՀ բանկային համակարգի շահույթը 2021թ.-ին կազմել է 59 մլրդ ՀՀ դրամ, ինչը 9.2%-ով կամ 4.9 մլրդ դրամով ավելի է 2020թ.-ի դեկտեմբերի ցուցանիշից: Հաշվետու տարում տնտեսական աճը Հայաստանում կազմել է 5.7%, ՀՆԱ-ն՝ 6,983 մլրդ ՀՀ դրամ կամ 14,5 մլրդ ԱՄՆ դոլար: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 2 ,357.4 հազ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 2 ,087.8 հազ ՀՀ դրամի դիմաց:



ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿ

Դիմերեն՝ ՀՀ զինանշանը, խաղողի ողկույզ՝ ԱՊՀ անդամ պետությունների քանակը խորհրդանշող հատիկներով, հայկական զարդանախշ: Դարձերեն՝ ԱՊՀ պատկերանիշը: Եսքիզների հեղինակներ՝ Էդուարդ Կուրդիսյան (դիմերեն), Լուսինե Լալայան (դարձերեն):

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՆՐԱՆՑ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ





ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ-125

Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին նվիրված հուշադրամ:
 Դիմերես՝ դրվագ Չարենցին նվիրված «Ամբոխները
 խելագարված» կոմպոզիցիայից:
 Դարձերես՝ դրվագ Չարենցի հուշարձանից և Նրա
 ստորագրությունը:

2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Յունիբանկը թողարկեց շուրջ 1,1 մլրդ դրամ ծավալով արտոնյալ բաժնետոմսեր՝ հաստատագրված տարեկան եկամտաբերությամբ: Բանկը, լինելով պարտատոմսերի շուկայի ակտիվ մասնակից, ընդհանուր առմամբ իրականացրել է պարտատոմսերի 18 թողարկում և տեղաբաշխել շուրջ 4,3 մլրդ դրամ և 39,5 մլն դոլար: Սանկտ Պետերբուրգում կայացած պարտատոմսերի կոնգրեսում Յունիբանկի պարտատոմսերի Մոսկվայի բորսայում փոխցուցակումը ճանաչվել է Հայաստանի լավագույն գործարք:
- Նախորդ տարի Յունիբանկը նախաձեռնել և ընթացիկ տարվա օգոստոսից հաջողությամբ կսկսի լրացուցիչ 21,739,131 հատ՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ բաց բաժանորդագրության միջոցով 230 ՀՀ դրամ շուկայական արժեքով տեղաբաշխման իրականացմամբ:
- Շարունակվել են աշխատանքները Բանկի թղթակցային հարաբերությունների աշխարհագրության ընդլայնման ուղղությամբ: Միջազգային վճարային գործարքների հաջողության գրավականը պրոֆեսիոնալ անձնակազմն է, օպերատիվությունը և մրցունակ սակագները: Նախորդ տարվա ընթացքում Բանկում SWIFT փոխանցումների ծավալն աճել է ավելի քան 20%-ով: Visa միջազգային վճարային համակարգի կողմից Յունիբանկին շնորհվել է մրցանակ անդրսահմանային գործարքների ծավալի համար:
- Մասնաճյուղային ցանցի զարգացման քաղաքականության շրջանակներում Բանկը բացել է «Արին Բերդ» և «Մոսկվա» մասնաճյուղերը, «Տաշիր Կենտրոն», «Տերյան», «Ամիրյան», «Երիտասարդական» մասնաճյուղերը հիմնանորոգվել և արդիականացվել են, «Ալավերդի» մասնաճյուղի գործունեությունը դադարեցվել է՝ ակտիվները և պարտավորությունները փոխանցվել են «Վանաձոր» մասնաճյուղին: Միաժամանակ շարունակական աշխատանքներ են տարվել բջջային հավելվածի ֆունկցիոնալության ընդլայնման ուղղությամբ, UniMobile-ի օգտատերերի շրջանակը 2020 թվականի համեմատ գրեթե եռապատկվել է:
- Յունիբանկը հաջողությամբ անցել է PCI DSS պահանջներին համապատասխանության տարեկան հավաստագրման աուդիտը և ISO 27001:2013 միջազգային ստանդարտին համապատասխանության վերահավաստագրումը:
- Յունիբանկը դարձել է Visa միջազգային վճարային համակարգի մրցանակի հաղթող՝ «Highets cross-border share in Visa Business volume 2021» անվանակարգում՝ Հայաստանում Visa քարտերի թողարկման թվով առաջատար դիրքի համար:
- 2021թ. դեկտեմբերին Moody's Investors Service միջազգային վարկանշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկանիշը B2 մակարդակում՝ կայուն հեռանկարով:

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՆԿԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԱԿՏԻՎՆԵՐ

252,823.5
մլն ՀՀ դրամ

ՎԱՐԿԵՐ

135,413.1
մլն ՀՀ դրամ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

222,052.4
մլն ՀՀ դրամ

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

12,168.8
մլն ՀՀ դրամ

ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

10,958.1
մլն ՀՀ դրամ

ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ


6,549.9
մլն ՀՀ դրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ


30,771
մլն ՀՀ դրամ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՅՈՒՆԻԲԱՆԿՆ ԱՊԱՅՈՎԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ


ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ԱԿՏԻՎՆԵՐԸ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)




ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)



ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ԿԱՊԻՏԱԼԸ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)



ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾԲԸ 31.12.21Թ.




ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Բանկի ընդհանուր վարկային ներդրումներն առ 31.12.2021թ. կազմել են ընդհանուր ակտիվների 54%-ը: Դրամային վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 53%-ը, իսկ արտարժույթով արտահայտված վարկային պորտֆելը՝ 47% : Վարկավորման միջին տոկոսադրույքը կազմել է տարեկան 9.4% նախորդ տարվա 9.6% դիմաց: 2021 թվականին տրամադրված վարկերի վարկավորման միջին տոկոսադրույքը կազմել է տարեկան 9%:

Բարելավվել է իրավիճակը ժամկետանց պարտավորությունների մասով, ֆիզիկական անձանց չաշխատող վարկերի մակարդակը 11.2%-ից նվազել է մինչև 4.2%-ի, իսկ իրավաբանական անձանց չաշխատող վարկերի մակարդակը 16.1%-ից նվազել է մինչև 12.3%-ի տարվա ընթացքում իրականացված հետևյալ միջոցառումների արդյունքում՝ բիզնես գործընթացների ավտոմատացում, սքորինգային համակարգերի բարելավում, վերակառուցում, հետբերման աշխատանքների ակտիվացում, ՓՄՁ վարկավորման կենտրոնի և Անդերրայթինգի ուժեղացում, վարկավորման շուկայի սեզամետավորում:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՅՎԱԾԲԸ 31.12.21Թ.







ՕԳԱՆԵՍՈՆ (OG)

Օգանեսոն (Og) քիմիական տարրին նվիրված հուշադրամ Դիմերես՝ Օգանեսոն (Og) քիմիական տարրի պատկերը, ՄՀՄԻ պատկերանշանը:
Դարձերես՝ Յուրի Յովհաննիսյանի դիմաքանդակը (քանդակագործ՝ Ղ. Չուբարյան, 1979 թ.):

ԱՎԱՆԴԱՅԻՆ ԴՈՐՏՖԵԼ

Ժամկետային ավանդների պորտֆելը հաշվետու տարվա վերջում կազմել է 193.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 23%-ով կամ 36.8 մլրդ ՀՀ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց ավանդների՝ 50.6%-ով ավելացմամբ, որը 31.12.2021թ. կազմել է 74,5 մլրդ դրամ կամ Բանկի ընդհանուր պարտավորությունների 33,5%-ը: Միաժամանակ ֆիզիկական անձանց ավանդներն աճել են 11.0%-ով՝ կազմելով 119.2 մլրդ դրամ կամ Բանկի ընդհանուր պարտավորությունների 53.7%-ը:

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԱՆԵՐԸ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)



ՆԵՐԳՐԱՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ 31.12.21

- Թողարկված պարտքային արժեթղթեր
- Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
- Փոխառություններ
- Հաճախորդների նկատմամբ պարտավորություն
- Այլ պարտավորություններ



ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 30-ԱՄՅԱԿ


Հայոց բանակի կազմավորման 30-ամյակին նվիրված ոսկե հուշադրամ:

Դիմերեն՝ ՀՀ զինանշանը:

Դարձերեն՝ ՀՀ զինված ուժերի զինանշանից հատված:

Էսքիզների հեղինակ՝ Հարություն Սամուելյան:

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ



ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

Մանրածախ քիզնեսի զարգացումը Բանկի համար շարունակել է առաջնահերթություն մնալ նաև 2021 թվականին:

Սպառողական պահանջարկի վերականգնումը հանգեցրեց վարկավորման աճին, սակայն ընդհանուր մանրածախ պորտֆելի գրանցված նվազումը պայմանավորված է Բանկի՝ ակտիվների որակը գալիորեն բարելավելու և արդյունավետության նոր մակարդակի հասնելու ռազմավարությամբ, այդ թվում՝ վարկերի գծով լրացուցիչ պահուստների ստեղծման միջոցով: Հաշվետու տարվա 2-րդ եռամսյակից վարկառուների կարգապահության բարելավում է նկատվում, ժամկետանցների տեսակարար կշիռը եղել է 5,8%-ի սահմաններում: Ֆիզիկական անձանց վարկերի պորտֆելը տարեվերջին կազմել է ավելի քան 78,4 մլրդ դրամ:

Տրամադրումների ծավալի նկատելի աճ է ապահովվել անշարժ գույքի գրավադրմամբ սպառողական վարկերի գծով: Մի շարք խոշոր մանրածախ ցանցերի հետ ամուր հարաբերությունները, նորարարական ավտոմատացված համակարգը պահպանել են Յունիբանկի առաջատար դիրքերը տրամադրված POS-վարկերի քանակով: Արհեստական բանականության տեխնոլոգիայի կիրառմամբ 2021թ. ուսումնասիրվել է ավելի քան 400.000 վարկային հայտ, այս ոլորտում Բանկին բաժին է ընկնում շուկայի ավելի քան 21%-ը: Հաշվետու տարվա 4-րդ եռամսյակում Յունիբանկը Հայաստանում առաջատար է ճանաչվել ինչպես POS-վարկերի քանակով, այնպես էլ ծավալով: Երկրում բնակարանաշինության զարգացման հետ մեկտեղ հիփոթեքը դարձավ մանրածախ վարկավորման նիշային գործիք, այդ վարկերի պորտֆելը կազմել է 11,3 մլրդ դրամ, ընդ որում այս պորտֆելով գրանցված է ժամկետանցի ամենացածր տոկոսը՝ 1,8%:

Գնալով ընդառաջ վարկային պարտավորությունների սպասարկման ընթացիկ դժվարություններ ունեցող հաճախորդներին՝ Բանկը շարունակել է առաջարկել վարկերի վերակառուցման և վերաֆինանսավորման համար օպտիմալ լուծումներ: Մանր սպառողական վարկերի գծով վերակառուցման ծավալը կազմել է 3,5 մլրդ դրամ:

Մանրածախ հաճախորդների դրամական միջոցներն աճել են 11%-ով և կազմել 119,2 մլրդ դրամ, այդ թվում ժամկետային ավանդների պորտֆելն աճել է 20%-ով կազմելով 105,5 մլրդ դրամ, իսկ ցպահանջ միջոցների ծավալը կազմել է 13,7 մլրդ դրամ՝ 2020 թվականի 19,4 մլրդ դրամի դիմաց:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

Փոքր և միկրո բիզնեսի վարկավորումը շարունակել է մնալ Յունիբանկի զարգացման գերակա ուղղություն կորպորատիվ սեգմենտում՝ պոտենցիալ նիշաների ընտրության նկատմամբ ճյուղային մոտեցման կիրառմամբ: Կենտրոնանալով թիրախային սեգմենտների վրա՝ կորպորատիվ բիզնեսի ստորաբաժանման ջանքերն ակտիվորեն ուղղված էին փոքր արտադրության, առևտրի, սպասարկման ոլորտների, ագրո և ֆերմերային տնտեսությունների ֆինանսավորմանը:

2021 թվականին Յունիբանկը շարունակել է մասնագիտանալ փոքր և միջին բիզնեսի սպասարկման ոլորտում: Բանկը եղել է տնտեսության այս հատվածի միջազգային ֆինանսավորման ծրագրերի ակտիվ մասնակից: Ընդլայնելով համագործակցությունը գերմանական KfW զարգացման բանկի հետ՝ Յունիբանկը նախաձեռնել է գյուղատնտեսության ոլորտին աջակցելու վարկավորման ծրագիր: Վարկավորման բիզնես գործընթացն օպտիմալացնելու նպատակով աշխատանքներ են տարվում միկրովարկերի սքորինգային համակարգում արհեստական բանականության տեխնոլոգիան ներդնելու ուղղությամբ, ինչը զգալիորեն կխնայի աշխատանքային և ժամանակային ռեսուրսները:

Ֆինանսական անկայունության պայմաններում կորպորատիվ բիզնեսի հիմնական խնդիրն էր կենտրոնանալ բիզնեսի առավել ցածր ռիսկային հատվածների վարկավորման վրա, պահպանելով վարկային պորտֆելի ծավալը, շեշտը դնելով բարեխիղճ վարկառուների և վերջիններիս համապարփակ սպասարկման համար հարաբերությունների զարգացման վրա:

Տարեվերջի դրությամբ կորպորատիվ վարկերի ծավալը Բանկի ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 43%, կամ 60 մլրդ դրամ, պորտֆելը դիվերսիֆիկացված է Բանկի վարկավորման քաղաքականությամբ սահմանված նիշային հատվածներով:

ՓՄՁ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ



ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՅ

Տարեվերջի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 55 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, 82 պրոմո կետ, 104 բանկոմատ, 108 վճարային տերմինալ: Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրյա հաճախորդների ներգրավմանը: Տարվա ընթացքում Բանկը սպասարկել է ավելի քան 325.000 հաճախորդների, որից 322.000՝ մանրածախ:



ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿ 75

Մայիսի 9-ը Մեծ հաղթանակի տոն է նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում յուրաքանչյուր ընտանիքի համար: Մեր հայրերն ու պապերն են կերտել այդ հաղթանակը՝ դառնալով հերոսության և իրական հայրենասիրության օրինակ ապագա սերունդների համար:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի կադրային քաղաքականությունն ուղղված է արդյունավետ և բարձր որակավորում ունեցող կադրային ներուժի ձևավորմանը, անձնակազմի ուսուցման համակարգի զարգացմանը, աշխատակիցների համար մոտիվացիոն համակարգի բարելավմանը, ինչպես նաև կորպորատիվ մշակույթի նորմերի պահպանմանը, որը ենթադրում է գործարար հաղորդակցության և սպասարկման ստանդարտների պահպանում:

Կադրային քաղաքականությունն ուղղված է անձնակազմի մանրակրկիտ ընտրությանն ու ուսուցմանը, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող կադրերի ձևավորմանը, որի շնորհիվ հնարավոր է ապահովել ծրագրված արդյունքները: Տվյալ քաղաքականությունն իրականացվում է բանկի կորպորատիվ շահերի շրջանակներում առավել փորձառու մասնագետների ներգրավման, նախաձեռնող աշխատակիցների խրախուսման և առաջ-խաղացման միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվում պրոֆեսիոնալ մակարդակի աճին և օպտիմալ վարչակազմակերպչական կառուցվածքի ձևավորմանը:

Ընտրության, թեստավորման և հարցազրույցների ընթացքում առանձնացվում են պատասխանատու, առաջադեմ և նպատակասլաց մասնագետներ, որոնք կհստում են բանկի արժեքները և պատրաստ են դրանք զարգացնել: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և որակավորման մակարդակի որոշման համար բանկը պարբերաբար անցկացնում է անձնակազմի ատեստավորում և ռոտացիաներ:

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱԾԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝

- բիզնես ստորաբաժանումների արդյունավետության բարձրացման նպատակով բանկի վարչակազմակերպչական կառուցվածքի փոփոխությունը,
- համակարգված ուսուցման զարգացում ու աշխատակիցների որակավորման բարձրացումը,
- վերապատրաստման ծրագրերի իրականացում և Հայաստանի առաջադեմ ԲՈՒՀ-երից ուսա-նողների ներգրավումը:

2021Թ-ին ԲԱՆԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԿԱԶՄԵԼ Է 840:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Այստեղ Բանկի 2021թ. քաղաքականությունն ուղղված է եղել ապահովելու բանկի գործունեության խիստ համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը: Այդ նպատակով իրականացվել է Բանկի ներքին իրավական ակտերի, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների և գործիքների բազմակողմանի վերլուծություն, օրենսդրական փոփոխությունների նախագծերի ուսումնասիրություն, ինչպես նաև Բանկի կառուցվածքային ու տարածքային ստորաբաժանումների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում:

Դեպարտամենտի գործունեության հատուկ ուշադրության կենտրոնում է հաճախորդների բողոքների և առաջարկությունների վերլուծությունը, որը նպատակ է հետապնդում բարելավելու հաճախորդների սպասարկման որակը և բացառելու նմանատիպ բողոքների կրկնությունը հետագայում: Դեպարտամենտի գործունեության որակի մասին են խոսում ներքոնշյալ թվերը՝ 2021թ. ընթացքում գրանցվել է 734 բողոք, որոնցից Բանկն ամբողջովին կամ մասնակիորեն բավարարել է միայն 138 (ընդհանուր թվի 22.9 տոկոսը):

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Բանկում գործում է լիարժեք կորպորատիվ կառավարման կառուցվածք, որը ներառում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը, Ներքին աուդիտը, Խորհրդին կից Հանձնաժողովները, Վարչությանը կից Հանձնաժողովները:

Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի գործունեության հիմնական հարցերի վերաբերյալ: Բաժնետերերի ընդհանուր ժողովն անց է կացվում ամեն տարի: Խորհրդի որոշմամբ նաև կարող է գումարվել արտահերթ ժողով: Բաժնետերերի ընդհանուր ժողովի ամսաթիվը սահմանում է Խորհուրդը:

Բանկը տեղեկացնում է բաժնետերերին Ընդհանուր ժողովի անցկացման մասին՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելով հաղորդագրություն ոչ ուշ, քան 15 օր առաջ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից և 30 օր առաջ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները նույն կարգով տեղեկացվում են բաժնետերերին:

Բանկի Խորհուրդը հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, որը սահմանում է Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև՝ ներքին վերահսկողության կազմակերպման մոտեցումները: Բանկի Խորհուրդը, իրականացնելով իր գործունեությունը, հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, գործում է Բանկի և բաժնետերերի շահերի համաձայն, ինչպես նաև ապահովում է բոլոր այլ շահագրգիռ անձանց շահերը և օրինական պահանջները:

Բանկի Վարչությունն իրականացնում է ընթացիկ, օպերացիոն գործունեության ղեկավարումը լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ: Վարչությունը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին և Բանկի Խորհրդին: Ներքին աուդիտն ունի անկախ կարգավիճակ, գործում է Խորհրդի անմիջական հսկողության ներքո: Իրականացնում է Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության ստուգում և գնահատում:

Բանկի արդյունավետ գործունեությունն ապահովելու գործում ղեկավար մարմիններին աջակցում են հետևյալ հանձնաժողովները՝ Խորհրդին կից. Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով, Ներդրումային հանձնաժողով, Պարզաատրումների հանձնաժողով, Վարչությանը կից. Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողով, Սակագնային հանձնաժողով, Անձնակազմի գնահատման հանձնաժողով, Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով, Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողովը:

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յունիբանկը դինամիկ զարգացող իննովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև՝ որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:



ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾԱՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը համայն հայության հոգևոր կենտրոնն է և Ծայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց Կաթողիկոսի նստավայրը: Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը քրիստոնեական աշխարհի առաջին պաշտոնական Տաճարն է, որը կառուցվել է 301-303 թթ.՝ Սբ Տրդատ Գ. Մեծ հայոց արքայի և Սբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի նախաձեռնությամբ և ջանքերով:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն
- հասարակության վստահություն
- ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- հուսալիություն և կայունություն

ՄԵՆՔ ՁԳՏՈՒՄ ԵՆՔ

- ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը
- բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- բարձրացնել բանկի ներդրումային գրավչություն

ՅՈՒՆԻԲԱՆԿԻ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հաճախորդամետ մոտեցում
Մրցակցային առավելության պահպանումը ինովացիոն որոշումների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների խնդիրների առաջընթացով
- Պրոֆեսիոնալ թիմ և մոտիվացված անձնակազմ
Բանկի անձնակազմը դա ակտիվ է և Բանկի հաջողությունը անհնար է առանց գործնական ձեռքբերումների և յուրաքանչյուր աշխատակցի նկատմամբ լրյալ վերաբերմունք դրսևորելուց
- Առաջադեմ բանկային տեխնոլոգիաների կիրառում
Քայլ առաջ իր հիմնական մրցակիցներից



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿ

Դիմերեն՝ Սպենդիարյանի հուշարձանը (քանդակագործներ՝ Ա. Սարգսյան, Ղ. Չուբարյան, ճարտարապետներ՝ Գ. Աղաբաբյան, Ֆ. Դարբինյան, 1953 թ.)՝ Օպերայի և բալետի թատրոնի շենքի ֆոնին, և պարուհի: Դարձերեն՝ Սպենդիարյանի դիմապատկերը, «Երեք արմավենի» ստեղծագործության նոտաների էջեր:

- Ֆինանսական արդյունքներ
Ապահովել շահույթ իր գործունեության արդյունքում, օպտիմալացնել ծախսերը պահպանելով ռիսկի և եկամտի հարաբերակցությունը
- Կորպորատիվ կառավարում
Ի շահ բաժնետերերի ուժեղ, թափանցիկ և արդար կորպորատիվ մշակույթի ձևավորում
- Կորպորատիվ և սոցիալական պատասխանատվություն
Բանկը հանդիսանում է իր երկրի քաղաքացին և պարտավոր է իր ավանդի ունենալ հասարակության զարգացման մեջ

ԶԱՐԳԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2022Թ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկի զարգացման ռազմավարությամբ սահմանված առաջնահերթություններն ուղղված են Բանկի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ հետևյալ հիմնական խնդիրների լուծման միջոցով.

- բաժնետերերի կառուցվածքի ընդլայնում և դիվերսիֆիկացում, 5 մլրդ դրամ ծավալով սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով կապիտալի ներգրավում,
- միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության զարգացում, Բանկի ֆինանսական ծառայությունների շրջանակն ընդլայնելու համար արտաքին ռեսուրսների օգտագործում,
- մանրածախ վարկավորման շուկայում Բանկի մասնաբաժնի ավելացում,
- որպես երկարաժամկետ համաշխարհային միտում «կանաչ» ֆինանսավորման փորձի կիրառումը,
- ֆինանսական տեխնոլոգիաների զարգացումը (արհեստական բանականության կիրառում փոքր բիզնեսի վարկավորման գործում, մարքեթֆիլդի հարթակի և էլեկտրոնային առևտրի գործարկում, հեռահար բանկային համակարգերի զարգացում),
- տրանզակցիոն եկամուտների աճի նոր գործիքակազմի մշակում,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործում և լավագույն փորձի ներդրում

ՄԵՐ ԹԻՄԸ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ



ԳԱԳԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ
Խորհրդի նախագահ

«Յունիբանկ» ԲԲԸ - համահիմնադիր,
Խորհրդի նախագահ,
«Յունիստրիմ» ԲԲԸ - համահիմնադիր,
Տնօրենների Խորհրդի նախագահ,
«ՌԵՍՈ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ Տնօրենների
Խորհրդի նախագահ:



ԳԵՈՐԳԻ ԴԻՍԿՈՎ
Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ - համահիմնադիր,
Խորհրդի անդամ,
«Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների
Խորհրդի անդամ,
«Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ՍՊԸ-ի
համահիմնադիր,
Տնօրենների Խորհրդի նախագահ,
MoneyTo դրամական փոխանցումների
համակարգի հիմնադիր / սեփականատեր:



ԷԴՈՒԱՐԴ ԶԱՄԱՆՅԱՆ
Խորհրդի անդամ



ԱՐՏԵՄ ԿՈՆՏՏԱՆԴՅԱՆ
Խորհրդի անդամ

«Հայաստան Իրավագիտություն»
Խորհրդի անդամ,
«Անիվ» հայագիտական
հետազոտությունների զարգացում
և աջակցություն» հիմնադրամ,
հոգաբարձուների Խորհրդի նախագահ:



ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ
Խորհրդի անդամ

«Յունիլիզինգ» ընկերության բաժնետեր և
Խորհրդի անդամ,
«ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ:



ՀՐԱՀԱՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Խորհրդի անդամ

«Տրանսստրոյբանկ»-ի Տնօրենների
Խորհրդի նախագահ:



ԴԱԿԻԹ ՓԱՓԱԶՅԱՆ
Խորհրդի անդամ

«Հայաստանի Հանրապետության ազգային
շահերի պետական հիմնադրամ»,
գլխավոր տնօրեն:

Բանկի Վարչությունը



ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈՒՅԱՆ
Վարչության նախագահ



ԳՈՐԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վարչության անդամ

Ֆինանսական տնօրեն - գլխավոր
հաշվապահ:



ՕԿՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Վարչության անդամ

Վարչության նախագահի տեղակալ -
Իրավական սպասարկման և ժամկետանց
պարտավորությունների հետքերման գծով
տնօրեն:



ԴԱՎԻԹ ԴԵՏՐՈՍՅԱՆ
Վարչության անդամ

Կորպորատիվ բիզնեսի զարգացման և
վաճառքների տնօրեն:



ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության նախագահ
առաջին տեղակալ



ԳՈՐԳԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության անդամ

Վարչության նախագահի տեղակալ,
մանրածախ բիզնեսի և միջազգային
զարգացման գծով տնօրեն:



Ապերյան Արթուր
Վարչության անդամ

Օպերացիոն սպասարկման և
տեղեկատվական համակարգերի տնօրեն:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է հետևել շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին: Վարկավորման ծրագրերի իրականացման ժամանակ բանկը հաշվի է առնում շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների համապատասխանության փաստը և նախապատվություն է տալիս էկոլոգիապես մաքուր ապրանքների արտադրությանն ու ռեսուրսախնայող գործունեություն իրականացնող ծրագրերի վարկավորմանը: Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է նվազագույնի հասցնել այն նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ

Moody-s Investors Service միջազգային գործակալությունը պահպանել է Յունիբանկի վարկանիշը՝ սահմանելով B2 դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար: Բազային վարկային գնահատականը /baseline credit assessment (BCA)/սահմանվել է b3, իսկ կոնտրադենտի ռիսկի գնահատականը /longterm Counterparty Risk Assessment (CR Assessment)/՝ B2(cr)/ NP(cr) մակարդակի վրա: Կանխատեսումը՝ կայուն:

ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

- BANKA POPOLARE DI SONDRIO
- EURASIAN DEVELOPMNET BANK
- LANDESBANK BADEN-WUERTTEMBERG
- CHINA CONSTRUCTION BANK (ASTANA)
- CB UNISTREAM
- ALFA BANK
- BANK OF GEORGIA
- TRANSKAPITALBANK

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- Տեղեկատվություն հաճախորդների համար
+ 374 10 59 55 55
callcenter@unibank.am
- Տեղեկատվություն բաժնետերերի համար
Ներդրողների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների զարգացման վարչություն
+374 10 59 22 59 (301)
ir@unibank.am
margarita.hambardzumyan@unibank.am
- Բանկի աշխատակազմ
+374 10 59 22 59 (310)
anna.badoyan@unibank.am
- Տեղեկատվություն ՋԼՄ-ների համար
Հասարակայնության հետ կապերի ծառայություն
+374 10 55 56 86
lusine.khachatryan@unibank.am
- Բանկի գլխամասային գրասենյակի հասցե՝ 0025, ՀՀ, Երևան, Չարենցի 12, N53, 1-5
+374 10 59 22 59,
+374 10 59 55 55,
- Աուդիտոր Գրանթ Թորնթոն- ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0015, Երևան Պլազա, Բիզնես Կենտրոն, Գրիգոր Լուսավորիչ 9
Հ. + 374 10 500 964
Ֆ.+ 374 10 500 961




UNIBANK

www.unibank.am

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2021թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	12
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	14
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	16

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9

Հ. + 374 10 500 964
Ֆ. + 374 10 500 961

Grant Thornton CJSC

Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia

T + 374 10 500 964
F + 374 10 500 961

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Բաժնետերերին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկին՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 35.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Մտուզվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել է թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:

- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմները:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և այլն):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության

անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դեկլարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում դեկլարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական

ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն,
Առաջադրանքի պատասխանատու



18 ապրիլի 2022թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2021	2020
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	6	20,914,648	19,471,091
Տոկոսային ծախսեր	6	(9,956,532)	(9,419,847)
Զուտ տոկոսային եկամուտներ		10,958,116	10,051,244
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	3,513,711	2,770,901
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(640,647)	(614,638)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ		2,873,064	2,156,263
Զուտ առևտրային եկամուտ	8	3,111,291	1,118,369
Այլ եկամուտներ	9	565,509	1,360,247
Արժեզրկման ծախս	10	(13,073,327)	(5,786,898)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(3,911,514)	(3,862,403)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	(1,045,796)	(975,205)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	21	(171,891)	(145,757)
Այլ ծախսեր	12	(4,380,314)	(3,474,144)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		(5,074,862)	441,716
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	13	738,820	(203,140)
Տարվա շահույթ/(վնաս)		(4,336,042)	238,576
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
<i>Հողվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում</i>			
Հիմնական միջոցների վերագնահատում		-	408,411
Զվերադասակարգվող հողվածներին վերաբերող շահութահարկ		-	(73,514)
Զուտ օգուտ հողվածներից, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		-	334,897

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2021	2020
<i>Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>		
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)	158,173	(165,761)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	(25,231)	23,948
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ	(23,930)	25,796
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով գուտ օգուտ/(վնաս)	109,012	(116,017)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի	109,012	218,880
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(4,227,030)	457,456
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնաս	14	(0,0008418)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 106-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
	Ծանոթ.		
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	63,239,222	28,450,237
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16	5,239	2,020
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	16,182,224	18,197,520
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	18	135,413,053	156,575,090
Ներդրումային արժեթղթեր	19	17,394,144	1,648,404
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	19	-	14,901,530
Հիմնական միջոցներ	20	10,767,377	10,287,139
Ոչ նյութական ակտիվներ	21	2,728,749	2,301,902
Հետաձգված հարկային ակտիվ	13	480,335	-
Կանխավճարներ շահութահարկի գծով		310,366	127,210
Այլ ակտիվներ	22	6,302,758	5,681,000
Ընդամենը՝ ակտիվներ		<u>252,823,467</u>	<u>238,172,052</u>
<i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>			
<i>Պարտավորություններ</i>			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	10,906,695	29,573,686
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	193,643,724	156,805,550
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	10,867	30,336
Փոխառություններ	25	3,121,387	5,905,308
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	12,168,789	9,498,202
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		65,120	-
Հետաձգված հարկային պարտավորություն	13	-	312,486
Այլ պարտավորություններ	27	2,135,833	2,147,402
Ընդամենը՝ պարտավորություններ		<u>222,052,415</u>	<u>204,272,970</u>


Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի, 2021թ.	31 դեկտեմբերի, 2020թ.
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	28	21,588,653	20,489,653
Էմիսիոն եկամուտ		9,605,638	9,605,638
Գլխավոր պահուստ		641,779	608,510
Այլ պահուստներ		1,732,279	1,722,635
Չբաշխված շահույթ/(կուտակված վնաս)		(2,797,297)	1,472,646
Ընդամենը՝ սեփական կապիտալ		<u>30,771,052</u>	<u>33,899,082</u>
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		<u>252,823,467</u>	<u>238,172,052</u>

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2022թ. ապրիլի 18-ին:

Հակոբյան Մեսրոպ

Վարչության նախագահ



Գոհար Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները կազմված են ընդհանուր առմամբ հաշվետվությունների բաղկացուցիչ ստոր նախնոր 16-ից մինչև 106-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա- հատման պահուստ	Չբաշխված շահույթ/ (Կուտակված վնաս)	Ընդամենը
Հաշվեկշիռը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	20,489,653	9,605,638	608,510	(63,145)	1,785,780	1,472,646	33,899,082
Տարվա վնաս	-	-	-	-	-	(4,336,042)	(4,336,042)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>							
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(99,368)	99,368	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն	-	-	-	158,173	-	-	158,173
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխություններ	-	-	-	(25,231)	-	-	(25,231)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(23,930)	-	-	(23,930)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	109,012	(99,368)	(4,236,674)	(4,227,030)
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,099,000	-	-	-	-	-	1,099,000
Հատկացում պահուստին	-	-	33,269	-	-	(33,269)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	1,099,000	-	33,269	-	-	(33,269)	1,099,000
Հաշվեկշիռը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,588,653	9,605,638	641,779	45,867	1,686,412	(2,797,297)	30,771,052

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա- հատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	20,489,653	9,605,638	508,876	52,872	1,450,883	1,717,824	33,825,746
Տարվա շահույթ	-	-	-	-	-	238,576	238,576
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>							
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	408,411	-	408,411
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն	-	-	-	(165,761)	-	-	(165,761)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխություններ	-	-	-	23,948	-	-	23,948
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	25,796	(73,514)	-	(47,718)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(116,017)	334,897	238,576	457,456
Հատկացում պահուստին	-	-	99,634	-	-	(99,634)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(384,120)	(384,120)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	99,634	-	-	(483,754)	(384,120)
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,489,653	9,605,638	608,510	(63,145)	1,785,780	1,472,646	33,899,082

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 106-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2021	2020
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	(5,074,862)	441,716
<i>Ճշգրտումներ</i>		
Արժեզրկման ծախս	13,073,327	5,786,898
Բռնագանձված ակտիվների արժեզրկման հակադարձումից և իրացումից օգուտներ	-	31,289
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	1,217,687	1,120,962
Հիմնական միջոցների օտարումից գուտ վնաս	87,869	-
Այլ ակտիվների օտարումից օգուտներ	-	(85,459)
Ստացվելիք տոկոսներ	(19,744)	(621,786)
Վճարվելիք տոկոսներ	208,716	(356,881)
Ածանցյալ գործիքների վերագնահատում	(22,688)	471,022
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից գուտ (օգուտ)/վնաս	802,043	(824,780)
<i>Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</i>	<u>10,272,348</u>	<u>5,962,981</u>
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	460,850	6,902,338
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	(462,944)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	830,829	(13,568,076)
Այլ ակտիվներ	(716,485)	509,935
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,103,708	(252,126)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	48,971,949	(40,566,623)
Այլ պարտավորություններ	8,272	(631,918)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) մինչև շահութահարկը	<u>62,931,471</u>	<u>(42,106,433)</u>
Վճարված շահութահարկ	(195,967)	(669,294)
Գործառնական գործունեությունից գուտ դրամական միջոցների հոսքեր	<u>62,735,504</u>	<u>(42,775,727)</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2021	2020
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք	(1,717,970)	1,987,110
Հիմնական միջոցների առք	(1,180,730)	(673,882)
Հիմնական միջոցների վաճառք	210,719	245,910
Ոչ նյութական ակտիվների առք	(598,738)	(513,900)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(3,286,719)	1,045,238
<i>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	1,099,000	-
Շահաբաժինների վճարում	-	(384,120)
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ներգրավում/(մարում)	(21,092,453)	21,971,666
Պարտքային արժեթղթերի թողարկում/(մարում)	3,534,522	(757,846)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(707,581)	(479,289)
Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների մարում	(2,583,135)	(337,930)
Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(19,749,647)	20,012,481
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)	39,699,138	(21,718,008)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	28,450,237	49,575,707
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	15,497	5,597
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(4,925,650)	586,941
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 15)	63,239,222	28,450,237
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	20,894,904	18,849,305
Վճարված տոկոսներ	(9,747,816)	(9,776,728)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 106-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: